

Լալիկ Մ. Խաչատրյան

Բանասիր. գիյր. դոկտոր

**«ՍԱԿՐԱԿԻԶԱՑԻԱ» ԵԶՐՈՒՅԹԻ
ԻՄԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ***

Բանալի բառեր – իմաստափոխություն, սրբայնացում, Աստված, Քրիստոս, Տեր Աստված, Սուրբ հոգի, Աստծո որդի, Աստվածածին, Սուրբ կույս, Տեր թագավոր, տաբու:

Մուտք

Հոդվածում դիտարկվում է իմաստափոխության դրսևորումներից մեկը՝ սրբայնացման (սակրալիզացիայի) իրողությունը, երբ բառերը կամ կապակցությունները ձեռք են բերում *«սրբազան, Աստծուն վերաբերող»* իմաստներ, որոնք իրենց էությանը նշանակում են *«բարձրարժեք, հարզանքի և պաշտամունքի արժանի»*:

Սրբայնացման իրողությունը լեզվում տեղի է ունենում տարբեր եղանակներով. ա) լեզվում *գոյություն ունեցող սովորական բառերին* հաղորդում են *«սրբազան» նշանակություն*. բ) լեզվում նոր բառ են ստեղծում կրոնական նոր հասկացությունն արտահայտելու համար, գ) *հարադրության* բաղադրիչներից մեկը ձեռք է բերում «աստվածություն» նշանակությունը, դ) բառերը բնագրի շրջանակներում ստանում են նոր իմաստավորում՝ բառակապակցության գլխավոր բաղադրիչի զեղչման (էլիպսիսի) հետևանքով, ե) պաշտամունքային որոշ անվանումներ ենթարկվում են տաբուի և այլն: Բառերի սրբայնացումը, որպես փոխաբերության դրսևորում, լեզվում դառնում է իմաստափոխության գործոն. սրբայնացած բառերը ենթարկվում են բառիմաստի նեղացման: Հայերենում գործածվող *սրբայնացում* և *սպասրբայնացում* եզրույթները պատճենված են համապատասխանաբար *սակրալիզապիա* և *ձեսակրալիզապիա* տերմիններից, որոնք իրենց հերթին լատինական փոխառություններ են: Այս եզրույթները

* Հոդվածն ընդունվել է տպագրության 22.06.2024:

ՎԷԸ համահայկական հանդես, ԺԶ (ԲԲ) տարի, թիվ 2 (86), ամբիլ-հունիս, 2024

հիմնականում աստվածաբանական (կրոնական) բնագավառի հասկացություններ են՝ իրենց բնորոշ կրոնակեղեցական ոլորտի իմաստներով ու նշանակություններով: Դրանք նաև արտահայտում են լեզվաբանական որոշակի հասկացություններ, սակայն որպես լեզվաբանական եզրույթներ՝ արձանագրված չեն ինչպես ռուսագիտության մեջ, այնպես էլ հայագիտական ուսումնասիրություններում և մասնագիտական բառարաններում (Վ. Դալ, Պ. Չերնիխ, Օ. Ախմանովա, Վ. Ստարիչյոնկ, Ի. Բոգատիրևա – Օ. Վոլոշինա, Տ. Մատվենա, Հ. Պետրոսյան – Ս. Գալստյան, Ա. Նազարյան և այլն): Այդ տերմինները վկայված են մեր կազմած լեզվաբանական տերմինների բառարանում՝ իմաստաբանության բաժնում՝ բնորոշելու բառերի բովանդակային պլանի նեղացման և ընդլայնման (իմաստափոխական) իրողություններ¹: Եվրոպական և ռուսական լեզվաբանական ավանդույթներում, այնուամենայնիվ, հանդիպում են սակրալիզացիայի վերաբերյալ որոշ կարգի դիտարկումներ²:

1. Սակրալիզացիա եզրույթի բովանդակության ըմբռումը

Սակրալիզացիա եզրույթը ծագում է *սրբազան* ածականից, որ հանգում է լատ. *sacralis* «սուրբ», այնուհետև *sacer* «սրբազան, սուրբ, անիծված» բառին, վերջինս էլ՝ հին *saceres* բառին: Ենթադրվում է, որ այն ծագում է նախահնդեվրոպական **sag-* «պատնեշել, պաշտպանել» արմատից³:

Տեղեկատվական տեխնոլոգիաներում և համացանցում *սակրալիզացիան* բնորոշվում է որպես իրերի, երևույթների, հասկացությունների և գաղափարների ինքնաբուխ կամ նպատակային օժտում սուրբ՝ առեղծվածային բովանդակությամբ: Այն նշանակում է նաև հասարակական-քա-

¹ Տե՛ս **Խաչատրյան Լ. Մ.**, Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Եր., ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021: Словарь иностранных слов բառարանում (Մոսկվա, «Русский язык» հրատ., 1988 և հետագա հրատարակություններ), որպես օտար բառ տրված է *Сакральны́й* բառահոդվածը՝ միայն «սրբազան, կրոնական պաշտանունքին և ծիսակարգին վերաբերող. ծիսական» իմաստներով, այսինքն՝ նրա քերականական իմաստներն արձանագրված չեն:

² Տե՛ս **Бенвенист Э.**, Словарь индоевропейских социальных терминов (Перевод с фр.), М., 1988. **Казиков Г.А.**, Процессы сакрализации и десакрализации в лексике «Современные методы сравнительно-исторических исследований», Материалы VIII Международной научно-практической конференции, М., 2013, էջ 142-151.

³ Որպես կենսաբանական հասկացություն՝ գործածվում է *os sacrum* «խաչված՝ խաչաձև ոսկոր» (բառացի՝ «սուրբ ոսկոր») արտահայտության մեջ, որ պատճենում է հուն. *ιερόν ὄστος* կապակցությունից (տե՛ս «Словарь иностранных слов» բառարանի համապատասխան բառահոդվածը):

ղաքական ինստիտուտների, ինչպես նաև մշակույթի, գիտության և կենցաղային հարաբերությունների տարրերի ենթակայությունը կրոնի ազդեցությանը:

Սակրալիզացիան աստվածաբանության մեջ նշանակում է «ենթարկվել Աստծո կամքին»: Դրա խորհրդանիշը օծումն է, այսինքն՝ այնպիսի արարողությունը, որի արդյունքում սովորական աշխարհիկ ընթացակարգը ձեռք է բերում աստվածային բովանդակություն⁴:

Ավանդական պաշտամունքներում երդումը միշտ կապված է աստվածության կերպարի հետ: Այսպիսով, հին հույները և հռոմեացիները երդվում էին Զևսի (Յուպիտերի) և այլ աստվածների անուններով, իսկ քրիստոնյաները՝ Աստծո, Հիսուս Քրիստոսի, Մարիամ Աստվածածնի կամ այլ սրբապատկերների առջև:

Ահա թե ինչ է գրում Կ. Յունգը քրիստոնեական իդեալների սրբադասման մասին. «Ռեֆորմացիայի կողմից սրբապատկերների վրա ձեռնարկված հարձակումը բառացիորեն ձեռքեց սրբազան խորհրդանիշների պաշտպանիչ պատր: Մեծ և փոքր, համընդհանուր և անհատական պատկերները փշրվեցին մեկը մյուսի հետևից, մինչև վերջապես տիրող դարձավ այժմյան սարսափելի խորհրդանշական աղքատությունը: ...Եկեղեցու ամբողջությունը նույնպես թուլացավ՝ այն վերածվեց մի ամբողջ՝ առանց բաստիոնների ու կազեմատների, փլուզված պատերով տան, որի մեջ ներխուժեցին աշխարհի բոլոր քամիներն ու դժվարությունները: Հելլադայի աստվածները և Հռոմը մահացան նույն հիվանդությունից, ինչ մեր քրիստոնեական խորհրդանիշները»⁵:

Սակրալիզացիայի բովանդակության կրոնատեղեցական կամ աստվածաբանական մեկնություններն այն նպատակն ունեն, որ հենվելով դրանց վրա՝ կարելի է ցույց տալ գաղափարական ինստիտուտների աներկբա ազդեցությունը լեզվի վրա, մյուս կողմից՝ դա հիմք է տալիս ասելու, որ բառական այդ իմաստները յուրահատուկ թեմատիկ խումբ են կազմում իմաստաբանական համակարգում, և այդ խումբը (տվյալ դեպքում՝ աստվածաբանական) ենթարկվում է կրոնական աշխարհայացքի ազդեցությանը՝ արտահայտվելով լեզվական կաղապարներով:

Լեզվի բառային կազմում որոշակի շերտ են կազմում կրոնապատմամունքային հասկացությունները, որոնք դիտվում են որպես առանձին

⁴ St'u Философский энциклопедический словарь, М., Советская энциклопедия. Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев, և ուրիշները, 1983. <https://hister1.ru/slovar/sekuljzarizacija-i-sakralizacija.htm> (մուտք՝ 18.05.2023).

⁵ Орехов С. И., Клятва и проклятие как элементы религиозного культа, Отношение человека к иррациональному. Свердловск, 1989, с. 213.

իմաստային-թեմատիկ խումբ: Այդ թեմատիկ խմբում (ինչպես նաև մյուս կարգի խմբերում) բառերն ու նրանց իմաստները մշտապես անփոփոխ ձևով տրված իրողություններ չեն. դրանք, զանազան գործոններով պայմանավորված, կարող են համալրվել նոր միավորներով ու նոր իմաստներով, մյուս կողմից՝ կարող են փոփոխվել՝ ապրելով իմաստային ծավալների ընդլայնում կամ նեղացում և այլն:

Կրոնապաշտամունքային (կրոնատեղեցական) իմաստային թեմատիկ խմբում կարելի է առանձնացնել ենթախմբեր, որոնց շարքում գերակա շերտ են կազմում այսպես կոչված «սրբազան» բառերը, որոնք վերաբերում են *Աստծուն* և *Աստվածամորը*:

Ինչպես նշեցինք, այդ բառերը և նրանց իմաստները, հասարակության գիտակցության փոփոխություններով պայմանավորված, կարող են ենթարկվել փոփոխությունների: Այդ փոփոխություններով են պայմանավորված՝ *ասկրալիզացիա* (սրբայնացում) և *դեսասկրալիզացիա* (ապասրբայնացում)⁶ հասկացությունները, որոնք կրոնական դաշտից անցել են լեզվաբանության բնագավառ՝ արտահայտելով քերականական որոշակի իմաստներ:

Երբ բառերը ձեռք են բերում «*սրբազան, Աստծուն վերաբերող*» բառիմաստներ, որոնք իրենց էությանը նշանակում են «*բարձրարժեք, հարգանքի և պաշտամունքի արժանի*», այդ դեպքում նմանատիպ բառերը ենթարկվում են *սրբայնացման*, նրանց իմաստները «սրբայնանում են», իսկ եթե բառերը կորցնում են «սրբազան» նշանակությունները, ենթարկվում են *ասպասրբայնացման*⁷ լրացնելով համագործածական բառերի շարքը:

Պարզ է, որ այս հասկացությունները կապվում են իմաստափոխության հետ՝ արտահայտելով մի դեպքում՝ բառիմաստի նեղացման, երկրորդ դեպքում՝ բառիմաստի ընդլայնման իրողություններ: *Սրբայնացման* ժամանակ տեղի է ունենում բառիմաստի նեղացում՝ իմաստի մասնավորեցում, իսկ *ասպասրբայնացման* ժամանակ՝ իմաստի ընդլայնում, ընդհանրացում:

Սույն հոդվածում կփորձենք հինհայերենյան բնագրերի շրջանակներում ցույց տալ *սրբայնացման* իրողության լեզվական դրսևորումները: Հին հայերենին դիմելն այն նպատակն ունի, որ դրանով կարելի է ցույց տալ, թե ինչպես է մեզանում բառերի սրբայնացման իրողությունը գործել վաղուց՝ կապված քրիստոնեական վարդապետության ձևավորման և նրա հետագա տարածման հետ: Եվ այդ կարգի բառերն իրենց նախնա-

⁶ **Դեսակրալիզացիա** (ապասրբայնացում) եզրույթի իմաստաբանության մեկնությունը առանձին հոդվածի նյութ է:

կան և ձեռք բերած իմաստներով գրաբարի բառային կազմի հետ փոխանցվել են լեզվի զարգացման հետագա շրջաններին և հասել ընդհուպ մեր օրերը:

Արդ, ի՛նչ եղանակներով է կատարվում բառիմաստի *սրբայնացումը*:

2. Բառիմաստի սրբայնացման եղանակները

Բառիմաստների պատմական քննությունը ցույց է տալիս, որ *սրբայնացումը* կատարվում է տարբեր եղանակներով: Դիտարկենք դրանք:

- Երբ արդեն *գոյություն ունեցող սովորական բառին Կրիստոսն* «սրբազան» նշանակություն. դա հատկապես տեղի է ունենում կրոնի ոլորտում: Այդպիսի արժեք են ձեռք բերել *հայր, որդի, հոգի, սուրբ կոյս* և նմանատիպ այլ բառեր ու բառակապակցություններ: Այս դեպքում տեղի է ունենում բառիմաստի նեղացում, այսինքն՝ սկզբնական ընդհանրական իմաստը մասնավորվում է նոր՝ «սրբազան» նշանակությամբ՝ խորհրդանշելով որոշակի հասկացություն. *հայր* խորհրդանշում է «Աստված», *որդի*՝ «Աստծո որդին՝ Քրիստոսը», *Սուրբ հոգին*՝ «Սուրբ երրորդությունը», *սուրբ կոյս*՝ «Մարիամ Աստվածածին» և այլն: Հմմտ.

- **Եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրև զմիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք (Յովհ., Ա, 14)⁷: Խօսեալ զմայր նորա Մարիամ Յովսէփու, մինչչև եկեալ առ միմեանս, գտաւ յղացեալ ի Հոգւոյն Սրբոյ (Մատ., Ա.18): Ես մկրտեմ զձեզ ջրով յապաշխարութիւն... նա մկրտեսցէ զձեզ ի Հոգին Սուրբ (Մատ., Գ, 11): Գնացէք այսուհետև, աշակերտեցէք զամենայն հեթանոսս, մկրտեցէք զնոսս յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ (Մատ., ԻԸ, 19): Ամբարիշտն Նեստոր հայիոյեաց զամենասուրբ կոյսն՝ մարդածին ասել, և ոչ թէ աստուածածին (Խոր., 342):**

Նմանապես, *Կեր* և *արարիչ* բառերի բառական իմաստները նեղացել են, այսինքն՝ նրանց նախնական իմաստները պասիվացել են և վերաբե-

⁷ Հմմտ. Հայր մեր, որ յերկինս ես, սուրբ եղիցի անուն քո (Մատ., Զ, 10): **Յոհան Քրիստոֆ Ադելունգը** «Mithridates, oder allgemaine Linguistics» (հ. 1-3, Դրեզդեն, 1806-1817) աշխատության մեջ «Հայր մեր» աղոթքը փոխադրել է հինգ հարյուր լեզուների ու բարբառների, և բոլոր այդ լեզուներում Հայր բաղադրիչն արտահայտում է «Աստված» սրբայնացած նշանակություն, ինչպես՝ Lords Prayer, Pater noster, Our Father, Unsere Vater, Отче наш և այլն:

րում են միայն Աստծուն: Հմմտ. Ջի գնա ընկալջիք *ի Տէր* արժանի սրբոց, եւ վերակացու լինիջիք նմա (Հռոմ., ԺԶ, 2): **Ջի թէ ոչ սաստ արարչին նահանջէր գնոսա, մի մի ի նոցանէ բաւական էր զամե-նեսին սաստակել՝ առ ի խնդրելոյ զվրէժ անարգանաց հասարակական արարչին** (Եզն., 16):

Բարձրեալ անցյալ դերբայի իմաստը (բարձրացող, բարձունքում գտնվող) մասնավորվել է «Աստված» նշանակությամբ և ենթարկվել սրբայնացման: Հմմտ.

Մատո՛ Աստուծոյ պատարագ օրհնութեան, կատարեա՛ Բարձրելոյն զուխտս քո (Սաղ., ԽԹ, 14-15): Որ բնակեալ է յօգնականութեան Բարձրելոյն, ընդ հովանեաւ Աստուծոյ յերկինս յանգիցէ (Սաղ., ԴԱ, 1):

- *Փոխառության ենթարկված* բառերը փոխառու լեզվում կարող են պահպանել իրենց սրբազան նշանակությունները և հանդես գալ նախնական (սրբազան) իմաստներով: Այդպես հունարենից անցած *կայտողիկոս, եպիսկոպոս, ավետարան, բիրլիա* բառերը մայր լեզվում ունեն սրբազան նշանակություններ:

Աստվածաշունչ մատյանը՝ հրեա ժողովրդի հնագույն գրական ստեղծագործությունը, եբրայերենից (հին հրեերենից) նախ թարգմանվել է հին հունարեն և կոչվել *Biblia*. այն նշանակում է *գրքեր*: Աստվածաշունչ մատյանն իրոք բաղկացած է *գրքերից*. հետևաբար ամբողջական գործը հին հունարենով կոչվել է *Biblia*:

Հին հունարենում βιβλος բառը բազմիմաստ է. նրա իմաստներից մեկն է՝ «գիրք, գրքի գլուխ՝ բաժին»: Այդ իմաստներով βιβλος-ը հասարակ անուն է, սակայն նրա հոգնակին (βιβλια), խորհրդանշելով Աստվածաշնչի պատումները, ձեռք բերեց «սրբազան» նշանակություն, «սրբայնացավ» և ենթարկվեց սակրալիզացիայի: Երբ Աստվածաշունչը թարգմանեցին լեզվից լեզու, βιβλια-ն պահպանեց սրբային նշանակությունը և բոլոր լեզուներում այն համարվում է սակրալ (սրբային) նշանակությամբ բառ, ինչպես՝ լատ. *Biblia sacra Vulgata*, անգլ. *the Bibel*, գերմ. *Bibel*, ֆրանս. *Bible*, ռուս. *Библия* և այլն:

- Երբ *նոր բառ են սրեղծում կրոնական նոր հասկացությունն արտահայտելու համար*: Ընդ որում, այստեղ կարելի է երկու շերտ առանձնացնել.

ա) Բառեր, որոնք արտահայտելով *Աստված, Տէր* սրբազան նշանակություններ՝ վերաբերում են Աստծուն, ինչպես՝ *Միածին, Աստուածորդի, Կենդանապահ* և այլն: Հմմտ. **Եւ տեսաք զփառս նորա, զփառս իբրեւ զՄիածնի առ ի Հօրէ, լի շնորհօք** (Յովհ., Ա, 14): **Կարենք ճշմարտել վասն ծննդեան Աստուածորդոյն** (Ագաթ., 187): **Կամ հողմ՝ պարտասե-**

ցուցանելով, որ կենդանություն է ամենայն շնչառաց, եւ չիշխէ արգելով զկենդանութիւնն՝ առանց հրամանի *Կենդանապահին* (Եզն., 17):

բ) Սրբայնացած բառեր, որոնք վերաբերում են *Սուրբ Մարիամին*, օրինակ՝ *Ասրվածամայր*, *Տիրամայր*, *Մայր Տեսնն*, *Աստուածածին*, *Տիրածին*, *Աստուածածին կոյս*, *Աստուածամայր կոյս*, *Տիրածին կոյս*, ինչպես՝

Զմաքրական մարմինն *Աստուածամօր կուսին* ի յերկնային փոխումն *Աստուածամօրն* (ՆԼԲ, 1, 326): Յուցցի փրկութիւն իմ քեւ, Եթէ զիս գտցես, *Տիրամայր* (Նար., 202): *Աստուածածին* անարատ՝ *Մայր տեսնն* (ՆԼԲ, 1, 324): Մի որդի Հօրն միայնոյ՝ և միածին անդրանիկ՝ *աստուածամայր Տիրածին կոյսին* (Նար., 88): Յաճեցաւ մտանել յարգանդ մայրենի *Աստուածածին կուսին* (Նար., 235):

- Որոշ դեպքերում սրբայնացման են ենթարկվում *հարադրությունները*, եթե նրանց բաղադրիչներից մեկը «ստվածության» անվանում է, ինչպես՝ *Աստուած Բարձրեալ*, *Տէր Բարձրեալ*, *Տէր Աստուած*, հմմտ.

Աղաղակեցի առ *Աստուած Բարձրեալ*, առ Աստուած բարերար իմ (Սաղ., ԾԶ, 3): Արհնեալ ես դու, դուստր, *յԱստուծոյ Բարձրելոյ*, քան զամենայն կանայս, որ ի վերայ երկրի (Յուդիթ, ԺԳ, 23): *Տէր Բարձրեալ* և ահարկու (Սաղ., ԽԶ, 3): Բուսոյց ևս *Տէր Աստուած* յերկրէ զամենայն ծառ (Ծնն., Բ, 9):

Որդի բառը հետևյալ կապակցություններում խորհրդանշում է Քրիստոսին. *Տիրոջ որդի*, *Որդի մարդոյ*, *Որդի Աստուծոյ*, *Որդի Բարձրելոյ*, *Որդի Աստուծոյ Բարձրելոյ*: Հմմտ.

Նա եղիցի մեծ, եւ *Որդի Բարձրելոյ* կոչեցցի (Ղուկ., Ա, 32): Աղաղակեաց ի ձայն մեծ եւ ասէ. Զի՞ կա իմ և քո, Յիսուս, *Որդի Աստուծոյ Բարձրելոյ* (Մարկ., Ե, 7): Զի՞ կա իմ և քո, Յիսուս, *Որդի Աստուծոյ*, եկիր տարածամ տանջել՝ զմեզ (Մատ., Ը, 29): Դու ես *Որդին Աստուծոյ*, եւ նա յոյժ սաստէր նոցա, զի մի յայտնի առնիցեն զնա (Մարկ., Գ, 12): Մի ումեք պատմեցեն զոր տեսինն, բայց յորժամ *Որդի մարդոյ* ի մեռելոց յարիցէ (Մարկ., Թ, 9):

Բառերի սրբայնացումը կարող է տեղի ունենալ *բնագրի շրջանակներում*, որ կարելի է անվանել *համապրեքարային սրբայնացում*. համագործածական որևէ բառ, փոխանվանաբար գործածվելով, պատումի շրջանակներում կարող է արտահայտել «սրբազան», «աստված» նշանակություններ՝ ենթարկվելով իմաստի նեղացման: Դա տեղի է ունենում բառակապակցության գլխավոր բաղադրիչի էլիպսիսի հետևանքով: Այսպես, *Աստուած*, *Հայր* բառերը, որպես սրբայնացած միավորներ, բնու-

թագրվում են «երկնատր» հատկանշային բառով, վերջինս կարող է միայնակ հանդես գալ՝ կրելով բառակապակցության իմաստային բեռնվածությունը և արտահայտել սրբայնացած հասկացություն (Աստված): Համեմատենք բառակապակցության և փոխանվանական բաղադրիչի հետևյալ կիրառությունները.

Եւ եկին նոքա ի հայրենի երկրէն իւրեանց եւ երկիր պագին Աստուծոյ երկնատրի (Յուդիթ, Ե, 8): Ամենայն տունկ գոր ոչ տնկեաց Հայր իմ երկնատր՝ խլեսցի (Մատ., ԺԵ, 13): Թագաւորութիւն քո քեզ մնա մինչև ծանիցես զիշխանութիւն երկնատրին (Դանի., Դ, 23): Գործ մի դիւրին է Աստուծոյ մատնել զբազումս ի ձեռս սակաւուց, եւ ոչինչ է խտիր առաջի երկնատրին ընդ բազումս կամ ընդ սակաւս (Ա Մակ., Գ, 18):

Նմանապես, *երկնատր թագաւոր* կապակցությունը խորհրդանշում է Աստծուն, մինչդեռ *երկնատր* բաղադրիչի բացթողումով *թագաւոր* բառն է կրում կապակցության իմաստային բեռնվածությունը՝ համարժեք դառնալով *Աստծուն*: Հմմտ.

Վասն այտորիկ աղաչեմ զքեզ, կատարեա զուխտն, զոր ուխտեցեր թագաւորին երկնատրի (Ա Եզր., Դ, 46): Տէր Բարձրեալ և ահարկու, Թագաւոր մեծ ի վերայ ամենայն երկրի (Մաղ., ԽԶ, 3):

Մյուս կողմից՝ կապակցության բաղադրիչներից մեկի բացթողումը (էլլիպսիս) ստեղծում է իմաստի աստիճանավորում (գրադացիա)՝ շեշտելով տվյալ իմաստի սաստկությունը: Այսպես, հետևյալ օրինակում՝ «*Թագաւոր զօրաւոր երկնատր*, Տեր Յիսուս Քրիստոս» (Նար., 106), «թագաւոր զօրաւոր երկնատր» կապակցությունն արտահայտում է իմաստի սաստկացում, քանի որ «թագաւոր երկնատր» կապակցության *թագաւոր* բաղադրիչը գեղջվել է, և *երկնատր* բառը սաստկացնում է *թագաւոր զօրաւոր* կապակցության իմաստը:

Նմանապես *Տէր թագաւոր* կապակցությունը խորհրդանշում է Աստծուն, սակայն այդ իմաստը կարող է արտահայտվել բաղադրիչներից յուրաքանչյուրով (առանձին-առանձին): Հմմտ.

Չորաբաբէլ համբարձ զձեռս իւր յերկինս ընդ կողմն Երուսաղեմի եւ արինեաց զՏէր թագաւոր երկնից (Ա Եզր., Դ, 58): Եւ այդմ աղաչեմ զքեզ, Տէր իմ և թագաւոր, եւ խնդրեմ ի քէն, եւ զայս մեծ պարգևս շնորհեա դու ինձ (Ա Եզր., Դ, 46):

- Բառի համատեքստային սրբայնացման օրինակ է տալիս Եզնիկի «Եղծ աղանդոց» երկը: Եզնիկն աշխարհը համեմատում է կառքի հետ, որ լծված է չորս երիվարներով՝ միմյանց հակառակ տարրերով, սակայն. «...և է զօ-

րութիւն իմն ծածուկ *կատալար*, որ զչորս կազեցողսն ընդ միմեանս ի հաշտութեան և ի հաւանութեան պահեալ նուաճէ» (Եզն., 17): Այնուհետև, երբ կառքը միաժամանակ սլանում է տիեզերքի տարբեր ուղղություններով՝ հյուսիս, հարավ, արևելք և արևմուտք, ոչինչ չի խանգարում նրան, քանի որ «Ձեռն *կալարին* բաւական է յամենայն կողմանս դիմեցուցանել և ընդ չորս անկիւնս տիեզերաց արշաւեցուցանել» (Եզն., 18):

Վերոբերյալ հատվածներում *կատալար* բառը շարահյուսական սովյալ միջավայրում ձեռք է բերել «Աստված» իմաստը՝ ենթարկվելով սրբայնացման:

• Բառի սրբայնացման թերևս ամենաարմատական հիմունքը **տաբուն է**: Տաբունները հանդիպում են աշխարհի բոլոր լեզուներում, բայց ավելի շատ դրանք տարածված են հնագույն ժողովուրդների մոտ: Իսկ ե՛րբ են մարդիկ գործածել տաբուներին «բնութագրող, նկարագրող» բառեր ու արտահայտություններ: Հասարակության զարգացման վաղ շրջաններում և ներկա դարաշրջանում Աստվածների, տիրակալների և այլ սրբազան անձանց անունների արգելքը՝ որպես տաբու, մեծ տարածում ուներ: Սովորական մահկանացուների կողմից սուրբ անունն արտասանելը համարվում էր սրբապղծություն և ոտնձգություն «աստվածային» իշխանության նկատմամբ: Տաբուի դրսևորում է Աստծո անվան փոխարեն *Բարձրյալ*, *Գեղազույն ոգի* ասելը, որոնք այդ իմաստով ձեռք են բերել սրբազան նշանակություն: Տաբուի հետևանք է *փարալոն* բառի գործածությունը, որը նախնական իմաստով նշանակել է *մեծ ցուն, պալատ*. այսինքն՝ տիրակալի կամ թագավորի անունը տալու փոխարեն գործածել են նրա նստավայրի անվանումը՝ *փարալոն*, որ իմաստաբանորեն ենթարկվել է սակրալիզացիայի: Այդպես համաբանությամբ առաջացել է *Սպիտակ ցուն* անվանումը (քանի որ արգելված է եղել ԱՄՆ նախագահի անունը տալ): Հմնտ.

***Սպիտակ ցունը* պետք է երկխոսություն սկսի Պեկինի հետ, սակայն այդ մոտեցումը կարող է անհաջողության մատնվել.**– նախագուշացրել է դիվանագետ Հ. Քիսինջերը (news.am/arm/news, 18.05.2023).

Հրեաներն ավանդաբար *Ասրծո* (*Yahwe*) անվան փոխարեն արտաբերում էին *տեր* («*господь*»), *երկինք* («*небо*») կամ *անուն* («*имя*») բառերը, որոնք հրեական մշակույթում նույնպես ենթարկվել են սակրալիզացիայի: Այսպես՝ *my God / goodness*, «*боже мой*» և «*Ասրված իմ*» արտահայտու-

թյունները անգլերենում, ռուսերենում, հայերենում և այլ լեզուներում ևս դրսևորում են սակրալիզացիայի երևույթը:

Եզրակացություններ

Կրոնապաշտամունքային բառիմաստային թեմատիկ խմբում որոշակի շերտ են կազմում այսպես կոչված «սրբազան» նշանակությամբ բառերը, որոնք վերաբերում են *Աստուծոյն* և *Աստվածամորը*: Այդ բառերը համարվում են սրբայնացած (սակրալիզացիայի ենթարկված) և տվյալ իմաստային խմբում համարվում են գերակա (դոմինանտ) միավորներ: Երբ լեզվում հանդես են գալիս այդ հասկացությունները խորհրդանշող բառեր, վերջիններս ենթարկվում են սրբայնացման: Սրբայնացման իրողությունը լեզվում տեղի է ունենում տարբեր եղանակներով. երբ արդեն գոյություն ունեցող սովորական բառերը ձեռք են բերում «սրբազան» նշանակություններ, երբ փոխառության ենթարկված բառերը պահպանում են մայր լեզվում ունեցած սրբազան նշանակությունները, երբ հարադրության բաղադրիչներից մեկը «աստվածության» անվանում է, երբ նոր բառեր են ստեղծվում կրոնական նոր հասկացություն արտահայտելու համար, երբ բառերը բնագրի շրջանակներում ստանում են նոր՝ պաշտամունքային իմաստավորում, երբ պաշտամունքային որոշ անվանումներ, որոշակի գործոններով պայմանավորված, ենթակրվում են տաբուի և այլն:

Մրբազան նշանակությամբ բառախմբերի իմաստակառուցվածքային ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի լեզվի բառագիտական մակարդակի իմաստաբանական հարցերի քննության համատեքստում և կարող է ամբողջացնել հայերենի իմաստային-թեմատիկ խմբերի համաժամանակյա նկարագրությունը:

Լալիկ Մ. Խաչատրյան – հրատարակել է 22 գիրք (դպրոցական և բուհական դասագրքեր, ձեռնարկներ, բառարաններ, մենագրություններ), տպագրել է շուրջ 200 գիտական հոդված հանրապետության և արտերկրի գիտական հանդեսներում: Զբաղվում է ընդհանուր լեզվաբանության, հայոց լեզվի պատմության և լեզվի տեսության հարցերով: Հետաքրքրության շրջանակներում են գրաբարի տիպաբանությունը և Աստվածաշնչի բառային կազմի գուգադրական քննության հարցերը՝ ժոմանոգերմանական լեզուների համեմատության համատեքստում:

Էլ. հասցե՝ lingualal51@mail.ru

SEMANTICS OF THE TERM “SACRALIZATION”

Lalik M. Khachatryan

Doctor of Sciences in Philology

Key words – change in the meaning of words, sacralization, God, Christ, Lord God, Holy Spirit, Son of God, Mother of God, Blessed Virgin, Lord King, taboo.

The so-called "sacred" words, naming objects and concepts related to God and the Virgin, form a certain layer in the group of religious-themed vocabulary. They are considered to be the sanctified (sacralized) and higher (dominant) units of this semantic group.

The term sacralization entered linguistics from the religious and ecclesiastical areas. When words acquire "sacred, sacral" semantics, which essentially means "high value, worthy of respect and reverence", then such words are subjected to sacralization; their meanings are "sanctified". Sacralization is defined as the spontaneous or purposeful endowment of objects, phenomena, concepts, and ideas with sacred, mystical content.

The reality of sacralization in language manifests itself in different ways.

a) When an already existing ordinary word is given a "sacred" meaning. For example, *the father* symbolizes "God", *the son* is "Christ", *the Holy Spirit* is the "Holy Trinity", *the holy virgin* is "Theotokos Mary", and so on. b) When a new word is created to express a new religious concept, for example, *only begotten, son of God*, etc.

c) Nominative counts are subjected to sacralization when one of their components has the name "deity", for example, *God the Highest, Lord the Highest, Lord God*.

d) When the words acquire a new meaning within the framework of the original as a result of the ellipsis of the main component of the phrase, for example: heavenly God > *Heavenly*, Lord King > *King*, son of God > *Son*, God Almighty > *Almighty*, etc. e) When certain religious names are considered taboo. God > *Lord*, God > *Exalted*, etc.

Words can acquire a sacred meaning when certain religious names are tabooed, etc.

The "sanctification" of a word can take place within the text, which can be called contextual sanctification. Any accompanying word used as a substitute can express "sacred" and "divine" meanings in context, while its semantics are narrowed. This happens as a result of highlighting the main component of the phrase. Thus, the words God, Father, as sanctified units are defined by the characteristic word "heavenly". The latter can act separately, bearing the main semantic load of the phrase and expressing something sanctified.

The sacralization of words, as a consequence of metaphor, also becomes a factor in changing the meaning in the language. Sacred words undergo a narrowing of meaning.

СЕМАНТИКА ТЕРМИНА «САКРАЛИЗАЦИЯ»

Лалик М. Хачатрян

Доктор филологических наук

Ключевые слова - изменение значения слов, сакрализация, Бог, Христос, Господь Бог, Святой Дух, Сын Божий, Богородица, Пресвятая Дева, Господь Царь, табу.

Так называемые «священные» слова, называющие предметы и понятия, связанные с Богом и Богородицей, образуют определенный пласт в группе лексики религиозной тематики. Они считаются освященными (сакрализованными) и высшими (доминантными) единицами данной семантической группы.

Термин «сакрализация» вошел в языкознание из религиозной и церковной областей. Когда слова приобретают «священную, сакральную» семантику, означающую по существу «высокую ценность, достойную уважения и почитания», тогда подобные слова подвергаются сакрализации, «освящаются» их значения. Сакрализация определяется как спонтанное или целенаправленное наделение предметов, явлений, понятий и идей сакральным, мистическим содержанием. Реальность сакрализации в языке проявляется по-разному:

а) когда уже существующему обыденному слову придается «сакральное» значение. например, *отец* символизирует «Бога», *сын* – «Христа», Святой Дух – «Святую Троицу», *святая дева* – «Богородицу Марию» и т.д.;

б) когда создается новое слово для выражения нового религиозного понятия, например, *единородный*, *сын Божий* и т.д.;

в) сакрализации подвергаются номинативные сочетания, когда один из их компонентов имеет имя «божество», например *Бог Всевышний*, *Господь Всевышний*, *Господь Бог*;

г) когда слова приобретают новое значение в рамках исходного в результате эллипсиса главного компонента словосочетания, например: *небесный Бог* > *Небесный*, *Господь Царь* > *Царь*, *сын Божий* > *Сын*, *Всевышний Бог* > *Всевышний* и т.д.;

д) когда некоторые религиозные имена считаются табуированными: *Бог* > *Господь*, *Бог* > *Возвышенный* и т.д.

Слова могут приобретать сакральный смысл, когда на определенные религиозные имена ставится табу и т.д.

«Освящение» слова может происходить в рамках текста, это можно назвать контекстуальным освящением. Любое сопутствующее слово, используемое как заменяемое, может выражать «священное» и «божественное» значения в контексте, при этом

семантика его сужается. Это происходит в результате выделения главного компонента фразы. Так, слова *Бог, Отец* как освященные единицы определяются характерным словом «небесный». Последнее может выступать отдельно, неся главную смысловую нагрузку словосочетания и выражая нечто освященное.

Сакрализация слов, как следствие метафоры, также становится фактором изменения смысла слова в языке: сакральные слова подвергаются сужению значения.

Օգտագործված գրականություն

1. **Խաչատրյան Լ.** Լեզվաբանական տերմինների ուսումնական բառարան, Եր. , ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021:
2. **Adelung J. Ch.**, "Mithridates, oder allgemaine Linguistics", vv. 1-3, Dresden, 1806-1817.
3. **Бенвенист Э.**, Словарь индоевропейских социальных терминов /Перевод с фр./, Издательство: «Прогресс - Универс», М., 1988.
4. **Казаков Г.А.**, Процессы сакрализации и десакрализации в лексике /Современные методы сравнительно-исторических исследований. Материалы VIII Международной научно-практической конференции, «МАКС Пресс», М., 2013.
5. **Орехов С. И.**, Клятва и проклятие как элементы религиозного культа // Отношение человека к иррациональному, Свердловск, Издательство: Урал». 1989.
6. **Словарь иностранных слов**, Издательство: ЭКСМО-Пресс, Москва, 1988.
7. **Философский энциклопедический словарь.** Гл. редакция: Л. Ф. Ильичёв, П. Н. Федосеев и др., Издательство: Советская энциклопедия; Москва, 1983.

REFERENCES

1. **Adelung J. Ch.**, Mithridates, oder allgemaine Linguistics, vv. 1-3, Dresden, 1806-1817 (**in Deutsch**).
2. **Benvenist E.**, Slovar' indoevropskikh sotsial'nykh terminov /Perevod s fr./, Moscow, publ., "Прогресс - Универс", 1988 (**in Russian**).
3. **Kazakov G.A.**, Protsessy sakralizatsii i desakralizatsii v leksike /Sovremenniye metody sravnitel'no-istoricheskikh issledovaniy, Materialy VIII Mezhdunarodnoy nauchno-prakticheskoy konferentsii, publ., "МАКС Пресс", М., 2013 (**in Russian**).
4. **Orekhov S. I.**, Kljatva i prokljatie kak elementy religioznogo kul'ta // Otnosheniye cheloveka k irratsional'nomu. Sverdlovsk, "Урал" publ., 1989 (**in Russian**).
5. **Slovar' inostrannikh slov**, publ. ЭКСМО-Пресс, М., 1988 (**in Russian**).
6. **Filosofskiy entsiklopedicheskiy slovar**, publ. "Sovetskaya entsiklopediya", М., 1983 (**in Russian**).
7. **Khach'atryan L.**, Lezvabanakan terminneri usumnakan bararan, HH GAA "Gitut' jun" publ., Yer., 2021 (**in Armenian**).

Համացանցային հղումներ

1. news.am/arm/news (մուտք՝ 18.05.2023)
2. <https://histerl.ru/slovar/sekuljarizacija-i-sakralizacija.htm> (մուտք՝ 15. 05. 2023)

Համառոտագրություններ

ա) Աստվածաշունչ մատեան հին և նոր կտակարանաց⁸

Ա. Եզր – Եզր

Ա. Մակ. - Գիրք Մակաբայեցոց Ա

Դանի. - Մարգարէութիւն Դանիելի

Ծնն. - Գիրք Ծննդոց

Հռոմ. - Թուղթ Պաղոսի Առաքելոյ առ Հռովմայեցիս

Ղուկ. - Աւետարան ըստ Ղուկասու

Մար. - Աւետարան ըստ Մարկոսի

Մատ. - Աւետարան ըստ Մատթէոսի

Յուդիթ - Յուդիթ

Յովհ. - Յայտնութիւն Յովհաննու

Սաղ. - Գիրք սաղմոսաց Դավթի

բ) Մատենագիտական երկեր

Ագաթ. - Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1909:

Եզն. - Եզնկայ Կողբացոյ Եղծ աղանդոց, Վենետիկ, 1826:

Խոր. - Մովսիսի Խորենացոյ Պատմութիւն Հայոց, Տփլիս, 1913:

Նար. - Գր. Նարեկացի, Մատեան ողբերգութեան, Պուենոս - Այրէս, 1947:

Բառարաններ

Առձեռն բառարան հայկազեան լեզուի (ԱԲ), երկրորդ տպագրութիւն, Վենետիկ, Ի Սուրբ Ղազար, 1865:

Համաբարբառ հին և նոր կտակարանաց, աշխատասիրութիւն Թաղէոս վարդապետի
Աստուածատուրեան Արապկերցոյ, ի տպարանի Առաքելական աթոռոյ Սրբոց
Յակովբեանց, Երուսաղէմ, 1895:

ՆՀԲ - Նոր բառգիրք հայկազեան լեզուի (ՆՀԲ), Երկասիրութիւն երից վարդապետաց, Գ.
Աւետիքեան, Խ. Սիրմելեան, Մ. Աւգերեան, հհ. Ա-Բ, ի Վենետիկ, ի տպարանի Սրբոյն
Ղազարու, 1836 -1837:

⁸ Հայաստանի Աստուածաշնչային ընկերութիւն, Մեծ Բրիտանիա, 1997: